ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE16-E514-494C-858C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին

ԵԴ2/12907/02/25 քաղաք Երևան
21 Ապրիլ 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Արման Օհանյանը ուսումնասիրելով ըստ հայցի «ՄԵՐԿԱԴՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության **(այսուհետ նաև՝ Հայցվոր կամ «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ)** ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**՝ «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Արաիկ Եսայանի թիվ N 1716 Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

II

(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

<u>1.Գործի դատավարական նախապատմությունը.</u>

02.12.2025 թվականին՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի **(այսուհետ նաև՝ Համակարգ)** միջոցով, «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Արաիկ Եսայանի թիվ N 1716 Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

02.12.2025 թվականին ներկայացված հայցադիմումին կից Հայցվորի ներկայացուցիչ Տիգրան Գալստյանը «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ» միջնորդություն է ներկայացրել Դատարան:

02.12.2025 թվականին հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով մակագրվել է դատավոր Ա.Օհանյանին:

03.12.2025 թվականին հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով հասանելի է դարձել Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

12.12.2025 թվականին Դատարանը (դատավոր Ա.Օհանյան) «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում է կայացրել:

12.12.2025 թվականին Դատարանը (դատավոր Ա.Օհանյան) «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշում է կայացրել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում Դատարանի «Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշում ուղարկվել է դատավարության մասնակիցներին:

14.01.2026 թվականին Դատարանը «Նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ» որոշում է կայացրել:

25.03.2026 թվականին Դատարանը «Գործը հատուկ հայցային վարույթի կարգով և գրավոր ընթացակարգով քննելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին» որոշում է կայացրել:

27.03.2026 թվականին Պատասխանողի ներկայացուցիչը հայցադիմումի պատասխանին կից նաև հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն **(այսուհետ նաև՝ ՀՎ միջնորդություն)** է ներկայացրել Դատարան:

31.03.2026 թվականին Դատարանը «Գործի քննությունը դատական

նիստով իրականացնելու մասին» որոշում է կայացրել:

09.04.2026 թվականին Դատարանը «Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը սահմանելու, գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու և ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ սահմանելու մասին» արձանագրային որոշում է կայացրել:

16.04.2026 թվականին Հայցվորի ներկայացուցիչը ՀՎ միջնորդության դեմ դիրքորոշում է ներկայացրել Դատարան:

16.04.2026 թվականին Պատասխանողի ներկայացուցիչը ՀՎ միջնորդության դեմ ներկայացված Հայցվորի ներկայացուցչի դիրքորոշման վերաբերյալ առարկություն է ներկայացրել Դատարան

17.04.2026 թվականի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր՝ Ա.Օհանյան) վճռել է. **(մեջբերման սկիզբ)**

<<*1. «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Արաիկ Եսայանի՝ «ՄԵՐԿԱԴՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին* ***22.09.2025թ.-ի թիվ 05/n որոշումն*** *անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին հայցը՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով մերժել:*

*(...):****>>*** **(մեջբերման ավարտ)**:

III

(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատական ակտում թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունը կարող է ներկայացվել, իսկ դատարանն իր նախաձեռնությամբ այդ գործողությունները կատարում է դատական ակտի կայացման պահից մինչև դրա կատարումը*:*

2. Առաջին ատյանի դատարանի դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հարցը դատարանը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունն առաջին

ատյանի դատարանը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

3. Դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում:

4. Դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ դրանց վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Դատական ակտը բեկանելու դեպքում իրենց ուժը կորցնում են դրանում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումները, եթե այլ բան սահմանված չէ վերադաս դատական ատյանի որոշմամբ:

Դատարանը ուսումնասիրելով հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործը, հայտնաբերել է, որ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյան) կողմից հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործով 17.04.2026 թվականին կայացված վճռի <<Եզրափակիչ>> մասում առկա է տեխնիկական վրիպակ, այն է՝ <<Եզրափակիչ>> մասի <<1.>> կետում <<22.09.2025թ.-ի թիվ 1716-Ա հրամանն (որոշումը)>>-ի փոխարեն նշվել է <<22.09.2025թ.-ի թիվ 05/n որոշումն>>:

Դատարանը գտնում է, որ վերը շարադրված օրենսդրական նորմի հիմքով պետք է ուղղել հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործով 17.04.2026 թվականին կայացված վճռի <<Եզրափակիչ>> մասի **<<1.>>** կետում տեղ գտած վրիպակը, այն է՝ <<22.09.2025թ.-ի թիվ 05/n որոշումն>>-ի փոխարեն գրառելով <<22.09.2025թ.-ի թիվ 1716-Ա հրամանն (որոշումը)>>:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197, 199-200 հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հա. ԵԴ2/12907/02/25 գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյան) հա. ԵԴ2/12907/02/25 քաղաքացիական գործով **17.04.2026** թվականին կայացված վճռի **<<Եզրափակիչ>> մասի <<1.>>** կետում կատարել վրիպակի ուղղում և ***<<22.09.2025թ.-ի թիվ 05/n որոշումն>>*** գրառման փոխարեն գրառել ***<<22.09.2025թ.-ի թիվ 1716-Ա հրամանն (որոշումը)>>:***

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ **Արման Օհանյան** Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am